ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 91-Ա

«17» հուլիսի 2020 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 17-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 31-Ա որոշման 1-ին կետը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի փողոց 26, օբյեկտ 4 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը անհատույց, 3 տարի ժամկետով օգտագործման իրավունքով «Շիրակի մարզի զարգացման» հիմնադրամին տրամադրելու մասին» թիվ 17-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները
   1) որոշման վերնագրում «3 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ» թիվը և բառերը փոխարինել «10/ՏԱՍԸ/ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ»թվով և բառերով.
   2) Որոշման բովանդակության մեջ «3 տարի ժամկետով» թիվը և բառերը փոխարինել «10/տասը/ տարի ժամկետով» թվով և բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

«17» հուլիսի 2020 թվական
գյուղ Ամասիա